# Գևորգ Վոլոդյայի Պասկևիչյան

Ծնվել է 1969 թվականի հունվարի 5-ին Շիրակի մարզի Հոռոմ գյուղում:

1976-1986 թվականներին սովորել և ավարտել է Հոռոմի միջնակարգ դպրոցը:

1986-1987 թվականներին աշխատել է Լենինականի մանվածքային ֆաբրիկայում:

1987-1989 թվականներին զորակոչվել է ԽՍՀՄ բանակ, զինվորական ծառայությունը անցել է Լեհաստանում:

1989-1990 թվականներին աշխատել է Լենինականի Տեքստիլ կոմբինատում:

1990-1996 թվականներին սովորել և ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը «Մեքենաշինության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

1996-2000 թվականներին աշխատել է «Անուշարան» գործարանում և «Գյումրի Գարեջուրի» ածիկի արտադրամասում:

2000-2012 թվականներին աշխատել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ԱԳԼՃ կայանում որպես հերթափոխի պետ:

2012 թվականից մինչ օրս աշխատում է «Գյումրի Գարեջուր» ՍՊԸ-ի ածիկի արտադրամասում որպես հավաքակայանի վարիչ:

2021 թվականից Գյումրու համայնքի ավագանու «Բալասանյան դաշինք» խմբակցության անդամ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա: